

Բաժանորդագին կլինսիկ՝ Թուրքիսյ համար  
տարեկան 50 դրշ, Տուրսիոյ համար 5 ըռտելի,  
ուրիշ երկիրներու համար 10 դր:  
Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու-  
թիւնք եւս կ'ընդունուին :

Գաւառներէն Օսմանեան նամակադրոշը  
կ'ընդունուի՝ 1 դրշնոցը 34 փարայի հաշ-  
ով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դրզ:  
ԾԱՂԻՎԻ վերաբերեալ ամէն գործի համար  
դիմէլ:

# ԾԱՌԿ

**Առ Տեօրին-Հրատարակիչ  
ՅՈՎՆԵԱՆ Դ. ՓԱԼԱԳԻՍԵԱՆ  
Պոլիս, Պահէք-Գալու, Թաշ Խան, թիւ 50**

40 Фарш

## Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Фири

ՆՐ ՀՐՁԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 32

ՀԱՐԱՅ

23 Մայիս 1892

## ԳՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ

## ԳՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ

Աշխարհագրութեան գասագրոց յօ-  
րինման և հրատարակման գործին մէջ  
իւր մասնաւոր նախանձախնդրութիւնն  
ունեցող Պ. Մօրո, որոյ գասական գոր-  
ծերն քանից քննադատուած են նոյն  
իսկ այս էջերու մէջ, «իրրե սիրող և հե-  
տեւող Աշխարհագրական ուսման», պա-  
տեհնութիւն ունեցեր է ուժի ուսով քըն-  
նելու մեր նոր հրատարակած Պատկե-  
րազարդ Աշխարհագրութիւնը և պարտ  
անձին համարեր է իւր անաշառ դիտո-  
ղութիւնները «Արեւելք»ի մայիս 18/ի  
թուով մեր ուշադրութեան յանձնելու :

Ծնորհակալ եմք Պարոն Մօրօյի բարեսրտութենէն . կը գովեմք իւր եռանդը և ուրախ եմք որ փափազ ունի քննադատութելով ու քննադատելով՝ մանկավարժութիւն և աշխարհագրութիւն ուսանելու . և թէեւ յառաջ երթալու համար իւր ընտրած այս ձեւը ամենէն բանաւոր ձեւը չեմք գտներ , սակայն իւր ընտրած եղանակին մէջ կ'ուզեմք ազատ թողուլ զինքը . միայն կը խնդրեմք իրմէ որ ներէ մեզ բարեկամաբար խորհուրդ տալու իրեն որ յիշէ « Կօշկակարն ցիօշիկն » խմաստալից խօսքն և իւր կարողութենէն վեր գործերու մէջ չը մտնէ : Զեսնհաս անձի մը կողմանէ մեր Դասագրքի մասին մեզ ուղղուած որ և է բանաւոր դիտողութիւն սիրով և շնորհակալութեամբ պիտի ընդունէինք՝ գործոյս՝ երկրորդ տակագրութեան առթիւ օգտու ելու համար անկէ . այս խոկ մտագրութեամք , Աշխարհագրութեանս վերջը սապէս զեկուցում մ'ալ գրած եմք արդէն . « Կը խնդրուի պատուարժան ուսուցիչներէն՝ Դասագրքիս նկամամք իրենց ունեցած դիտողութիւններն ու խորհուրդներն հաղորդել Աշխատասիրողին , երկրորդ տակագրութեան առթիւ նկատողութեան առնուելու համար » : Թող' նե-

ըէ մեզ սակայն Պարոն Մօրօ՝ ան-  
կեղծօրէն ըսելու իրեն թէ , ինքն տա-  
կաւին շատ հետի է աշխարհագրու-  
թեան դասագիրք մը քննելու համար  
ձեռնհաս անձը կամ ուսուցիչը լինելէ :  
Մեր այս ըսածին համոզուելու համար :  
Պարոն Մօրօ , հաճեցէք պաղ արեամբ  
կարդալ ինչ որ պիտի պատասխանեմք  
ձեր գիտողութեանց :

Դուք, Պ. Մօրօ, վերջերս ձեր հրա-  
տարակած Աշխարհագրութեան Դա-  
սագրքին մէջ՝ աշխարհագրական հանե-  
լուկներ անուանը կարդ մ'առաջարկու-  
թիւններ դրած էիք և ձեր յայտարա-  
րութեաց մէջ զայնս շեշտած էիք իր-  
բեւ կարեւոր և օգտակար ինչ։ Իսկ  
մեք մեր Աշխարհագրութեան յառաջա-  
բանին մէջ, այս գործոյն ուղղութեան  
և ծրագրոյն նկատմամբ խօսուելու առ-  
թիւ, ի մէջ այլսց ըսած էինք.

« Ուսանողները չեմք՝ զբաղեցներ,  
ինչպէս դժբաղդաբար կ'ընեն ուսուցիչը  
ոմանք, «աշխարհագրական հանելուկ»  
անուան ներքեւ անպէտք առաջարկու-  
թիւններով, վասն զի համոզուած եմք  
թէ չունին որ և է օգուտ, ո'չ նոր բան  
մը կ'ուսուցանեն մանկան, ո'չ անոր  
մառաւոր կարողութիւնները կը հրահան-  
գեն, այլ կը ծառայեն միայն ժամանակա-  
ճառ ընելու զնա, այս պատճառաւ իսկ  
դատապարտուած են եւ բոպական ԱՄԴի  
մանկավարժութենէն. ոչ մէկ նշանա-  
ւոր մանկավարժ այդ տեսակ հանե-  
լուկներ առաջարկած է՝ աշխարհագրու-  
թեան դասերն օգտակար գործելու  
համար և ոչ ալ ԱՄԴի մանկավարժու-  
թեան սկզբանց համաձայն պատրաս-  
տուած նորագոյն դասագրոց մէջ տես-  
ուուած է այդպիսի ինչ. Իրաւ է թէ  
ողացոց ընթեցանուրեան յատկացեալ  
եւրոպական պարբերական հանդէսնե-  
տու, մէջ երեւցած են այդպիսի հանե-  
լուկներ, բայց հանդէսներու մէջ միայն  
ո'չ երբէք դասագրքերու մէջ, և  
սրբէն այդ հանելու կներու՝ այդ տե-  
սակ հանդէսներու մէջ հրատարակու-

թիւնն իսկ քննադատուած է : Մեր մեծ  
սիսալն այն է որ կը կարծեմք թէ ինչ որ  
Եւրոպայէն կուգայ մեզ, անպատճառ  
լաւ է և օգտակար . ո՞չ, Եւրոպական  
որքան դասագրքեր կան որ բացարձա-  
կապէս զէրօ կ'արժեն՝ արդի մանկա.  
վարժութեան պահանջմանց հանդէպ :

Մեզ համար կարևորն է գիտակցութեամբ  
ընտրել ինչ որ լաւ է և օգտակար . և  
ի բաց մերժել ամէն ինչ որ անօգուտ է ,  
մանաւանդ ամէն ինչ որ վնասակար է :

Հանելուկներու մասին մեր այս կարծիքը հերքելու համար, Պարուն Մօրօ կը ջանայ մեզ մատնանիշ ընել մեր դատավարատած եւրոպական հրատարակութիւններէն մի քանին որք կը պարունակեն նմանօրինակ հանելուկներ, և յոխորսանօք կը հարցունէ մեզ թէ արդեօք տեսա՞ծ ու կարդացա՞ծ եմք զայնս: Այս՝ Պարուն Մօրօ, ձեր նշանակած հեղինակութեանց մէկ մասը՝ ես և դասընկերներու դպրոցական գրասեղաններու վրայ խակ առիթ ունեցած եմք իւմէջ այլոց տեսնելու և կարդալու, դպրոցական շրջանի վերջին տարւոյն մէջ, երբ մեր ազնուամեծար Տնօրէնն և ուսուցիչն, Սուրէնեան Աւետիս Էֆէնտի, այժմ իրաւադէտ, մանկավարժութեան ընթացք մը կ'աւանդէր մեզ: Բայց եթէ տեսած ու կարդացած աւ չէինիմք զայնս, այս պարագայ բան մը չ'ապացուցաներ ձեզ ի նպաստ: Խնդիրը հինք և նորի վրայ է: Մէք ԱՐԴԻ մանկավայրին թեան պահանջումները յառաջ կը բերեմք, դուք ետ կ'երթաք դէպ ի ԱՆՑԵԱԼը և 30-40 տարուան, հինցած: անքիքայի կարգանցած հեղինակութիւններ յիշելով՝ անոնց մէջ հրատարակուած հանելուկներ մատնանիշ կ'ընէք: բարեյշատակ Larousse արդէն ինքը մանկավարժ մը էքը, գիտուն մէկը միայն, և իւր մօտ էք գար յառաջ հրատարակած «L'Ecole Normale»ները բնաւ չեն կարող ծառայել իրեւ ուղեցոյց կամ առաջնօրդ ԱՐԴԻ մանկավարժութեան: Ահա մեր և

ձեր մէջ եղած կարծեաց տարբերութիւնը, մեք՝ իբրեւ եւրոպական արդի մանկավարժութեան սկզբանց հետեւող՝ կը դատապարտեմք ճաշխարհագրական հանելուկներն» իբրեւ անողէտք, անօդուտ և մինչեւ իսկ վնասակար, իսկ դուք կը ջատագովիք զայնս, վասն զի այդպիսի հանելուկներ՝ տեսեր էք մի քանի հնօրեայ հանդէսներու, նաեւ մի քանի պարբերական հրատարակութեանց մէջ որք թէեւ տղայոց ընթերցանութեան յատկացեալ են, բայց մանկավարժական չեն ամենեւին, ինչպէս «Journal de la jeunesse» և այլք: Եթէ Ասքանազ է Փէնտիփ հրատարակած «Մաղիկ Մանկանց» անուն դաստիան պարբերական հրատարակութիւնը այդ կարգի հանելուկներ եւս տպագրած լինէր, միթէ այդ պատցո՞յց պիտի լինէր հանելուկներու օգագարութեան. և սակայն «Մաղիկ Մանկանց»՝ հակառակ իւր անուան՝ մանկավարժական հանդէս մը չէր, այլ պարզապէս դասընթացներու հաւաքածոյ մը: Հրատարակութեանց անուններով պիտի խարեմք մեք զմեք:

Եւ սակայն, վայրկեան մը հանգիստ թողումք իրենց գործին Եւրոպիս մանկավարժներն ու մանկավարժութիւնը, ինչպէս նաեւ մանկավարժութեան պոչէն չհասկցող և լոկ շահախնդրութեան համար գործող գրագէտներն ու հրատարակիչները (Եւրոպիոյ), և պահ մը մեք մեր սեպհական Հայու խելքով մը տածեմք սա հանելուկի խնդրոյն վրայ. տեսնեմք թէ ի՞նչ է օգտակարութիւնը: Առնեմք, օրինակի համար, Մարդարեանի Աշխարհագրութենչն հետեւեալ հանելուկը.

«Գտնել այնպիսի գետեր՝ որոց սկզբնատառերով կարելի ըլլայ կազմել Սդէնի անունը»:

Այս հանելուկն առաջարկուած է աշակերտին: Աս՝ այս հանելուկը լուծեւու աշխատած ժամանակ՝ կամ արդէն իսկ սովորած է Սափա, Դանուբ, Էլբա, Նէվա, Լուսա, ին գետերուն անունները և կամ չէ սովորած: Եթէ չէ սովորած, հազար տարի առ իւր ուղեցը բռնադատէ, չէ կարող ինքնին գտնել այդ անունները, որպէս զի անոնց սկզբնատառերով կազմէ Սդէնի անունը. իսկ եթէ արդէն սովորած է այդ գետերն, անոնց սկզբնատառերով «Սդէնի» կազմելով՝ հանելուկը ծառայած չը լինիր այդ գետերը սովորեցնելու, այլ արդէն սովորած ու գիտցուած անուններ ծառայած կը լինին հանելուկը լուծելու:

Պարզ կ'երեւ որ այսպիսի հանելուկներով զբաղեցնել աշխարհուները՝ անխընայ ժամանակառ ընել է զանոնք,

և այսպիսի ժամանակառութիւն մը կարող են յանձն առնուլ միայն այն ուսուցիչք՝ որոնք արդէն իսկ սովոր են դատին յատկացեալ ժամը դատարանին մէջ անընդհատ ծխելով, խահուէ խմելով և հէքիարներ պատմելով անցունել:

Հանելուկի խնդրէն յետոյ, Պարոն Մօրօ կ'անցնի կարծիք յայտնել թէ, եթէ մեր Դատապիրքը «նախնական վարժարանաց» համար է, բնական մասուր աւելի համառօտ դրուելու էր, իսկ եթէ «ի պէտս զարգացելոց» է պատրաստուած՝ ուրիշ շատ մը տեղեկութիւններ աւելցնելու էր, տեղեկութիւններ որոց թուումն մասանցը կ'ընէ: Մեր պատասխանը ուարդ է. մեր դասագիրքը նախապարտասական կարգերու համար չէ, ոչ ալ ի պէտս զարգացելոց. մեր Դատապիրքը պատրաստուած է ազգային բարձրագոյն նախակրթարանաց համար. հետեւարար ոչ բնական մասն աւելի համառօտ կըրնայինք անցնիլ և ոչ ալ քաղաքական մասը կըրնայինք խճողել այնպիսի տեղեկութիւններով որոնք մեր թաղային բարձրագոյն նախակրթարանաց ըրջանըն աւարտողներուն համար կըրնան ուսանելի լինիլ: Պարոն Մօրօյի հաճելի լինելու համար, չէինք կարող մեր Դատապիրքին համար մեր ընտրած ծրագիրը մոռնաւալ և յախուռն ու անխորհուրդ կերպիւ ամէն տեսակ տեղեկութիւններով ստուարացնել գործը:

Այնուհետեւ Պարոն Մօրօ կ'ացնի մեր Դատապիրքին իբրեւ թէ պահկասներն ու սխալները նշանակել:

Այս կարծեցեալ սխալներէն մի քանին իւր բծախնդիր ոգին կը մատնեն, վասն զի յայտնի կը կացուցանեն թէ յիշած է զանոնք՝ պարզապէս Սշխատասիրովին տղիտութեան վերագրելու համար. քննադատ մը կամ շատ միամիտ լինելու է և կամ իւր մասնաւոր հաշիւն ունենալու է, որպէս զի՝ սխալներ գտնելու մաքով գիրքը խուզարկած և սխալներու առաջարկութեան մասնակի համար, անթական գիրքը մէջ կ'աշխատի Յոյներ և Հայեր գտնուելու չէ եղեր, վասն զի Պարոն Մօրօ տեղեկութիւն չունի եղեր անոնց գոյութենէն: Աւստրիոյ մէջ ո՛չ կաթոլիկ Յոյներ և Հայեր գտնուելու չէ եղեր, վասն զի Պարոն Մօրօ այդպէս բան տեսած չունի եղեր, և այլն:

Պարոն Մօրօի իբրեւ սխալ նշանակած մի քանին բաներն ալ Մանկավարժական գիտութեան մէջ իւր ունեցած կատարեալ տղիտութիւնը կը ծառային ապացուցանելու: Օրինակ Փալագաչեան Սշխարհագրութեան Յնթ երեսին մէջ, Միջերկարկան ծով կ'ականի այսպէս:

«Իբրեւան թերակղզւոյն հարաւային կողմն է երկրի ամենէն կարեւոր նեղուցներէն մին, Ճիպրալբարայի նեղուցը, որ եւրոպան և Ավրիկէն իրարմէ կը զատէ և որ Ադլանտեան Ովկիանոսին հետ կը միացնէ Միջերկարկան ծովի, երկրագնտին ներքին ծովերէն ամենէն մէծը (2<sup>1/2</sup> միլիոն քառ. քիլո-

րութենէ մղեալ՝ գիրքը խուզարկելու ձեռնարկելով և սխալներու սովի հանդիպելով, Պարոն Մօրօ քաջութիւն կ'ունենայ ինքն իսկ սխալներ դարբնելու ընթերցողին որ այդ սխալները գոյութիւն ունին Փալագաչեան Սշխարհագրութեան մէջ: Օրինակի համար, Գլուխ երեսին մէջ «Անգղոյ հողը բարեբեր է ի բնէ» ըսած եմք եղեր, ուստի և ինքն պարտք կը համարի ուղղել զայս՝ ըսելով. «Անգղոյ հողը բարեբեր չէ ի բնէ», այլ արհեստ և աշխատացնելու ըրած են զայն առաջին կարգի երկրագործական մի երկիր»: Դարձեալ կը ստէ Պարոն Մօրօ, երբ կը յայտարարէ թէ Փալագաչեան Սշխարհագրութեան Յնթ երեսին մէջ Աւստրիոյ հարաւային սահմանը նշանակուած է: Նոյնպէս կը ստէ Պարոն Մօրօ, երբ կը յայտարարէ թէ Փալագաչեան Սշխարհագրութեան Յնթ երեսին մէջ Աւստրիոյ հարաւային սահմանը: «Հարաւային սահմանը, Ահա՛ թէ ի՞նչպէս նշանակուած եմք Աւստրիոյ հարաւային սահմանը. «Հարաւային սահմանը, Աղրիական ծով, Թուրքիա, Սերպիս և Խումանիա»: Սուսեր շնելով և բռնի մեր գրքին մէջ մտցնելով պիտի կատարէ գեր ձեր անաշառ քննադատի պաշտօնը:

Պարոն Մօրօի նշանակած կարծեցեալ սխալներէն մի քանին ալ իւր տղագիտութիւնը ապացուցանելու միայն կը ծառայէ իւրաքանչեալ անուայեն: Ինչ որ Պարոն Մօրօ չգիտեր և իւր յօրինած դասագրքին մէջ չէ դրած, Փալագաչեան մը իրաւունք չունի եղեր իւր յօրինած Դասադրքին մէջ դնելու: Օրինակի համար, Գերմանիոյ մէջ գտնուած թանկագին քարերը միշելու չէ եղեր, վասն զի Պարոն Մօրօ տեղեկութիւն չունի եղեր անոնց գոյութենէն: Աւստրիոյ մէջ ո՛չ կաթոլիկ Յոյներ և Հայեր գտնուելու չէ եղեր, վասն զի Պարոն Մօրօ այդպէս բան տեսած չունի եղեր, և այլն:

Պարոն Մօրօի իբրեւ սխալ նշանակած մի քանին բաներն ալ Մանկավարժական գիտութեան մէջ իւր ունեցած կատարեալ տղիտութիւնը կը ծառային ապացուցանելու: Օրինակ Փալագաչեան Սշխարհագրութեան Յնթ երեսին մէջ, Միջերկարկան ծով կ'ականի այսպէս:

«Իբրեւան թերակղզւոյն հարաւային կողմն է երկրի ամենէն կարեւոր նեղուցներէն մին, Ճիպրալբարայի նեղուցը, որ եւրոպան և Ավրիկէն իրարմէ կը զատէ և որ Ադլանտեան Ովկիանոսին հետ կը միացնէ Միջերկարկան ծովի, երկրագնտին ներքին մէծը (2<sup>1/2</sup> միլիոն քառ. քիլո-

մէթր)։ Հարաւային եւրոպիոյ երեք  
թերակզբիներն և մեծ կղզիներն՝ երեք  
մեծ մասերու և բազմաթիւ երկրորդա-  
կան ծովերու բաժնած են Միջերկրա-  
կան ծովը։

« Միջներկրականի առաջին մասը՝ կամ  
աւազանը կը գտնուի իրէրեան և իտա-  
լական թէրակղբիներուն միջեւ։ Այս  
աւազանին արեւմտեան կողմը կ'երեւին  
Պալէարհան կղզիի, որք են Մայօրքա,  
Մինօրքա, ևայլն Հիւսիսային կողմը,  
Գաղղիոյ ծովեզերաց վրայ, կազմուած  
է Լիօնի ծոցը։ Իտալիոյ ծովեզերաց  
վրայ՝ Ալպեան և Ապենինեան լերանց  
ստորոտը՝ ձէնովայի ծոցը։ Արեւելեան  
կողմը կը տեսնենք Քօսիքա, Սարսէնիքա  
և Սիկիլիա երեք լեռնոտ մեծ կղզինե-  
րը։ Այս կղզեաց և իտալական ծովե-  
զեր միջեւ կազմուած է Տիրէնեան ծո-  
վը, ուր կը գտնուին Ելափա կղզին, Լի-  
բարի կղզիք, ևայլն։ Քօսիքան և Սար-  
տէնիան իրարմէ կը զատուին Պօնիքա-  
չի նեղուցով։ Մէսինայի նեղուցը, որ  
շատ անցուգարձ ունի, Սիկիլիան կը  
բաժնէ իտալիայէն և Տիրէնեան ծովէն  
կ'առաջնորդէ ուղեւորը Միջերկրականի  
յաջորդ աւազանը։ »

Ապա , մի և նոյն կերպով նկարագրուած էն Միջերկրականի երկրորդ և երրորդ մասերն կամ աւազոնները՝ իրենց ապարունակած երկրորդական ծովերով , ծոցերով , կղզիներով , հրուանդաններով , նեղուցներով , և այլն :

Այս ձեւու ուստցման մը համար,  
Պարոն Մօրո, որուն գործը անցեալ  
դարու մանկավարդութեան հետ է միշտ,  
այսպէս կը գրէ.

« Նախ և առաջ՝ մանկավարժական  
օրինաց (անցեալ գարո՞ւ) դէմ մեղան-  
չել, նա մանաւանդ տանջել(?)է աշտ-  
կերտին ուղեղը, երբ մէկ հատուտի  
մէջ, օրինակի համար, մի միայն Մի-  
ջերկրականի աւազանին վրայ խօսուած  
պահուն՝ միանդամայն խճողել ծով,  
ծոց, նեղուց, կղզի, թերակղզի, ար-  
շիպեղագոս, ևայլն. Երես 34:— Մինչ-  
դեռ բնական(?) և գիւրագոյն միջոցն  
է՝ Երոսպիոյ բնական մասին վրայ խօս-  
ուած պահուն՝ ցամաքի և ջրոյ բաժա-  
նումները առանձինն դասաւորել»:

Ուսուցման ձեր առաջարկած մեթոդը՝ Պարոն Մօրո, ամենէն հակածնիկավարժական և ամենէն անբնական մեթոդն է ընդհակառակն. Նատ երկայն կը լինի մանրամասնութեանց մէջ մտնել՝ լուծելու համար այս խնդիրը, որ կրնայ մանկավարժական առանձին յօդուածի մը նիւթ լինիլ. Միայն կը հարցունեմք ձեզ, Պարոն Մօրո, և եթէ դուք անկարող էք վճռելու, կը հարցունեմք ձեւնհասներու, ո՞րն է բանաւորը և մանկավարժականը։ առ-

Նել՝ օրինակի՝ համար՝ Միջերկրականի  
առաջին տւազանը և անոր պարունա-  
կած ծոցերը, կղզիները, նեղուցները,  
և այլն, միանի ամայն սովորեցնելը թէ՝  
ամբողջ Եւրոպիոյ ծոցերը մէկ հատուա-  
ծի մէջ ամփոփել և այնովէս սովորեցնել  
համապատին նման մէկ ծովէն միւսը ցատ-  
կելով, յետոյ նոյն նաևպազութիւնը՝ նե-  
ղուցները սովորեցնելու, նոյնը՝ թերա-  
կղզիներու համար, կղզիներու, պարա-  
նոցներու համար, և այլն:

Եթէ պէտք է որ մի և նոյն տեղւոյ  
մէջ, օրինակի համար՝ Միջնականի  
առաջին մասին մէջ գտնուած ծոցերու,  
հրուանդաններու, կզզիներու և նե-  
զուցներու՝ իրարու նկատմամբ ունե-  
ցած յարաբերական գիրքն ըմբռնէ ար-  
դան, զայդ կարող է ըմբռնէլ մի միայն  
մեր առաջարկած մեթոսով, իսկ Պա-  
րոն Մօրօն մեթոսով՝ տղան ամէն  
սովորածները իրարմէ անջատ և անկալ  
բաներ կը դառնան, և ոչ միայն հա-  
ճոյք չեն պատճառեր իրեն ուսանողին,  
այլ և գործնական կենաց մէջ ալ չեն  
կարող օգտակար կերպով ծառացել,  
վասն զի մուսցուելու դաստակարտուած  
են: Եւ յետոյ, երբ տղան թութակօ-

բէն գոց ըրտօծ է միայն՝ օրինակի համար՝ Սունիս, Մեծ Պէլք, Փոքր Պէլք, Քարքէկար, Սխակէրրաք, և լն, տառնց մէկթէ մէկ համը յիշելու պէտք ունենայ, օրինակի համար Քարքէկարը, պարտաւոր է բռնադասելու ուղեղը, որտէս զի

Նախ Քարքեկարէն տուած նշանակուած անուններն յիշէ՝ Քարքեկարը յիշէլու համար. ինչ կարգաւ որ գոց ըրած է անունները, նայն կարգաւ միայն կըրնայ յիշէլ զանոնք. մինչեւ որ չյիշէ Սունիօթ, յաջորդ բառերը չէ կարող յիշէլ: ի՞նչ բանի կը ծառայէ: այսպիսի ուսուցում մը, Եւ աւելիին կայ. Պարին Մօրօ՝ տակաւին Քօրսիխա և Սարտենիս կղզիները չը սովորեցուցած: իւր աշակերտաց, կը սովորեցնէ այս երկու կղզիներուն մէջաեղ գտնուող Պանիք Ֆաջիոյ նեղուցը. դաս մը յետոյ թերակղզիները կը սովորեցնէ յաջորդ գասի մը մէջ դեռ նոր կը հասնի կղզիներուն. տեսէք իւր աշխարհագրութեան 16 և 17 երեսները, ար չը բանաւոր և մտն.

կալարժական մեթոսը. աւելի լաւ չեր լիներ եթէ Քօրսիքա և Սարսէնիա կղզիները ու Պոնիքաջիոյ նեղուցը միեւնոյն ժամանակ սովորեցնէր. Ծայրէ ի ծայր քննելով Մարգարեան Սշլարհագրութիւնը, ամէն մէկ երեսին մէջ կարելի է պատահիլ այսպիսի անբնական և հակասման կավարժական դասերու:

Փալվածեան Աշխարհագրութենէն  
վերը յառաջ բերուած հատուածէ մը  
տեսնք որ Միջերկրական ծովը՝ իրեն  
կազմած երկրորդ ական ծոմեռով և ծո-

ցերով ի միասին առնելով՝ իրրև ամբողջութիւն մը նկատած և երեք գլւխաւոր մասերու բաժնած, և ապա իւրաքանչիւր մասը զատ զատ նկարագրած եմք. Ճիշտ այս հիմնն վրայ՝ Միջերկրական ծովը կը թափին ըսած եմք. Յօ. Ասինէ և Մարյա գետերուն համար. Պարուն Մօրօ սիսալ կը յայտարարէ այսպէս ըսելը և կը կարծէ թէ այդ գետեր իրենց ընթացքը փոխել սպարտին Միջերկրական ծովը թափիւրու համար. Յօ և Ասինէ գետերը եթէ Գաղղիոյ ծովը կամ Մանչի ծովը և կամ Հիւսիսային ծովը թափիւրուգին, պարտաւոր էին անպատճառ փոխել իրենց ընթացքը. նոյնպէս եթէ Մարիցա գետը Սեւ Ծովուն մէջ թափիլ ուզըր պարտաւոր էր փոխել իւր ընթացքը. իսկ թէ՝ ըստ առաջնոյն՝ Միջերկրական ծովուն կամ անկէ կազմուած երկրորդական ծովու մը մէջ թափուելու համար՝ այդ գետեր իրենց ընթացքը փոխելու են ելել, յիրաւի՛ Մօրօս մը լինելու է մարդ՝ այսպիսի այլանդամի կարծիք մը ունենալու և հրապարակաւ յայտնելու համար:

Փալագաշեան Աշխարհագրութեան  
Յառաջաբանին վերջը քանի մը տողով  
ըստծէինք .

« Ի կերջոյ . չթողելու համար գործոյս մէջ փափաքելի բան մը , զետեղած եմք նաև գունաւոր աշխարհացոյց տախտակներ , որոց անհրաժեշտ պէտքն ու կարեւորութիւնը կը խոստովանի ամէն ուսուցիչ , զի աշխարհագրութեան գանձ առանց աշխարհացուցին չունի նշանակութիւն և չէ խակ կարելի : Խսկ թուզթի , կազմի , պատկերաց գեղեցկութեան և տպագրութեան մաքրութեան մասին ոչինչ կ'ըսեմք , զի գործն ինքնին ցոյց կուտայ ինքզինք՝ իւր վրայ առաջին հոյեացքը ձգողին : Այս ամէն առաւելութեանց միացնելով դնոյն աժանութիւնը . ահա՛ պատիւ կ'ունենամք պատուարժան ուսուցացներկայացնել Աշխարհագրութեան ուսուցման համար ամենէն յարմար գասագիրքն ի պէտս Ազգային կրթութեան , յաւսալով գտնել արժանաւոր քաջայերութիւնն : »

Սյս հատուածին մէջ երեւցած ա-  
մենէն յարմար գառագիլքն» բառերը  
Պարոի Մօրօի թիվերուն դպած լի-  
նելով, իւր գրադատականին մէջ վերէն  
վար քառասուն անգամ մեր երեսին  
տուած է այդ բառերը։ Մեք ահա՝  
գարձեալ կը պնդեմք որ, մեթօսի և  
պարունակութեան կողմանէ մեր դա-  
սագրքին ունեցած առաւելութիւննե-  
րը՝ ոյն հատուածի մէջ նշանակուած  
տռաւելրութեանց հետ միանալով, Փա-  
ռագայքան Ախառիչառասութիւնը։ նոյն

կարգի աշակերտաց գործածութեան սահմանեալ ուրիշ Աշխարհագրութեանց հետ բաղդատուելով, կրնայ ներկայա- նալ իրեւե ամենէն յարմարը, Պարոն Մօր հակառակը չէ կրցած ապացու- ցանել և կ'ապասեմք որ ապացուցա- նէ: Իսկ մինչեւ որ ապացուցանէ, մեք առ այժմ կը բաւականանամք՝ հարցնելով իրեն: Ի՞նչ հրաշքներ գործելու էինք, որպէս զի մեր Աշխարհագրութիւնը իր- մէն գնահատուելու պատույն արժա- նանար: Ըսէք, կ'աղաջեմ, Պարոն Մօր, ի՞նչ ընելու էինք: Փարիզի մէջ Վերսայիլ պալատ մը դնելու էինք, ինչպէս գրուած է Մարդարեան Աշխար- հագրութեան 56 երեսին մէջ, Ս. Մես- րոպայ գերեզմանը յԱշոիշա՞տ փոխա- դրելու էինք (էջ 189), Հռոմելայ վան- քը Ակնայ բոլորտի՞քը փոխադրելու էինք Ս. Ներսէս Շնորհաւոյ գերեզմանով, երկու հատ Սամսոն դնելո՞ւ էինք՝ մին Գասթէմունիի կուսակալութեան մէջ (էջ 184) և միւսը Տրապիզոնի կուսա- կալութեան մէջ (էջ 185), Սեւ ծովուն եղերաց Թիրէպօլուն Թարապուլուս ա՞ղ կոչելու էինք, Կովկասը տունձին փո- խարքայութեա՞ն վերածելու էինք (էջ 77), Գոյութիւն չունեցող վարժարա- նաց անուննե՞ր դնելու էինք, ինչպէս՝ Խսաեան հազարտաց կանգնելիք վար- ժարանը (էջ 59), Միացեալ Բնկերու- թեանց գրասենեակը յիշած ժամանակ՝ մոռացութեա՞ն տայինք Ազգ: Պատ- րիարքարանը և Ազգ: Հիւանդանոցը, Թրանսիլվանիոյ Հայերը անյիշատա՞կ թողուինք՝ ինչպէս դուք ըրած էք ձեր Աշխարհագրութեան մէջ, Հայաստա- նեաց Առաքելական Սուրբ Եկեղեցին Լուսաւորչական Եկեղեցի չինծու ան- ուա՞մբ մկրտէինք և զայն աղանդի կա՞րգ անցունէինք (էջ 18), ինչպէս դուք այս ամէնը ըրած էք ձեր Աշխար- հագրութեանց մէջ՝ ճոխացունելով զայ- նըս այսպիսի անարդարանալի և այ- լանդակ անթիւ և անհամար սիսալ- ներով: Ըսէք, Պարոն Մօր, ըսէք, այս տեսակ Աշխարհագրութիւն մը կ'ու- զէի՞ք հրատարակուած տեսնել: բայց ձերը կայ արդէն հրապարակի վրայ և ձեզ պէտք եղած պատփւը կը բերէ ձեզ:

Կը վերջացնեմք յայտարարելով թէ, Պարոն Մօրօի Քննադատականը անտե- զի համարելով հանդերձ, ամենեւին յաւակնութիւն չունիմք մեր Աշխար- հագրութեան Դասագիրքը բալորովին անսխալ և ամենայնիւ կատարեալ գործ մը նկատելու: Ինչպէս ամենէն ինսամով պատրաստուած գործերու մէջ, նոյն- պէս մեր Աշխարհագրութեան մէջ կըր- նան մանր մունք սխալներ, թերու- թիւններ գտնուիլ, բայց ատոնք՝ ար- դիւնք անուշագրութեան՝ չեն կարող

նուազեցնել աշխատասիրութեան մը  
յարգը և բնականաբար կ'ուղղուին յա-  
ջորդ տպագրութեան մ'առթիւ :

### 3. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Խրիմեան Սբքազսն հետեւ-  
եալ հեռագրական պատասխանը տուած  
է Կաթողիկոսական Տեղակալ Գեր.  
Երեմիա Եպիսկոպոսի՝ իւր ընտրութիւ-  
նը ծանուցանող հեռագրոյն .

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 9 մայիս  
Կարողիկոսական Տեղապահ  
Երեմիա Մըրազան  
Յէջմիածին

Ընկալեալ զշեռագիր չնորհաւորութեան Սրբազնութեանդ, յայտնեմ զիմս սրտագին չնորհակալիս :

ի Կեռնէն Սիօնի ողջունեմ զԶեզ և  
զհամայն Միաբան եղբարս ի Քրիստոս .  
աղօթեմ առ Տէր անսասան պահել  
զԱթու Հայրապետական և զորդիս Հայ  
Եկեղեցւոյ :

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ս . Ե լմիածնէն Թիֆլիզի լրագրաց  
ուղղեալ հեռագիր մը ի վեր կը հանէ սա  
պարագայն , թէ Ամեն . Խրիմեան Սըր-  
բազան որ ստացած է 72 քուէ , 72 տա-  
րեկան է :

— Էջմիածնէն մայիսի 5ին ՚Նոր Դարի  
զրկուած հեռագրէ մը կ՚իմանամք թէ՛,  
Կաթողիկոսացուաց վերջնական քուէ՛.  
արկութեան ժամանակ, Երեմիա Սրբա-  
զան Տէր-Սահակեան ստացեր է 12 քը-  
ուէ՛, Խորէն Սրբազան Մխիթարեան՝  
16 Քսուէ՛: Մայիս 4ին զրկուած հե-  
ռագրոյ մը մէջ կը կարդամք թէ՛՝ «Աւ-  
ղարկուած գրաւոր կարծիքների մեծ  
մասը յօգուտ Խրիմեան և Աշբեան  
Սրբազանների էին» :

— Կրօն . Փողազն որոշեց գրել Մշյ  
Գեր . Առաջնորդին , որ իւր յարմար դա-  
տած վարդապետներու անունը նշանա-  
կէ , որպէս զի անոնցմէ մին Բաղէշ գլու-  
նուի առաջնորդական փոխանորդի  
պաշտօնով . Որոշեց նաեւ գրել Ման-  
չէսթէրի , հոգեւոր հօվիր Գեր . Սու-  
քիսա վարդ . Պարոննեանի թէ տրուած  
տեղեկութեան մը համաձայն իւր պաշ-  
տօնէն հրաժարած է թէ ոչ , և եթէ  
ստորպ է , ի՞նչ պատճառաւ :

— Վաղը Ազգ . Սահմանադրութեան  
32րդ Տարեկարձը պիտի տօնուի՝ ըստ  
սովորութեան Ազգային Հիւանդանոցի  
պարտիզին մէջ :

— Ս . Երուսաղիմայ նուիրակ Գեր .  
Տ . Գաբրիէլ Ծ . Վարդ . Անոյշեան Բու-  
սիոյ և Պարսկաստանի Հայերն այցելե-

Ե յետոյ, այժմ կը գտնուի Հնդկաստանի Կալկաթա քաղաքին մէջ:

— Կաթողիկոսական ընտրութեան  
համար Պոլսէն գացող պատգամաւոր-  
ներէն մէկ քանին արդէն դարձած են  
մայրաքաղաքս և միւսներն ալ կ'սպաս-  
ուին :

— Սամաթիոյ Թաղական Խորհրդոյ  
ընտրութիւնը կատարուեցաւ կիւրակէ  
օր և ընտրուեցան .

1	Մ . Մանուկ է Փ.	Վարդանեան .	435
2	Գառնիկ	» Արշաւիր	424
3	Ղազարոս	» Միքայէլեան	421
4	Յովկաչի	» Սրմաքչչեան	417
5	Թորոս	» Մկրտիչեան	416
6	Միհրան	» Քերէստիձի	414
7	Մկրտիչ	» Սըլվաճեան	411
8	Միհրան	» Գալչըննէսեան	411
9	Տիրան	» Յովկաննէսեան	409
10	Յովակիտ	» Մելքոնեան	408
11	Ստեփան	» Ագտարեան	400
12	Միքայէլ	» Պէնկլեան	391

Նոր Թարի մէջ կը կարդամը հետեւ եալ լուրերը .

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻց մեզ գրում են.  
«Մայիսի 6ին, երեկոյեան ժամը 5ին  
դէպի ի Երևան ճանապարհ ընկաւ Մեծ.  
Պ. Սպանդար Սպանդարեանը, որին  
բարի երթ մաղթելով յարգով երիտա-  
սարդների մի ստուար խումբ, կառքե-  
րով և ձիերով ուղեկցեց մինչև կէս ճա-  
նապարհը»:

Նոյն օրը Թիւրքիոյ Հայոց եկեղեցական և աշխարհական պատգամաւորներից մի քանի խոը Դիլիջանի վրայով ճանապարհ ընկան դէպի ի Ալբանիանդրապոլ, Շիրակը, Անին և ուրիշ հնութիւնները աեսանելու:

— Ս. Էջմիածնից տեղական ռուս  
լրագիրներին հաղորդում են, որ հա-  
մազգային ժողովը՝ ընտրած կանտիտատ-  
ների ցուցակը կովկասի Պ. Կառավար-  
չապետին ներկայացնելու համար նշա-  
նակել է իւր միջից Շամախու թեմի ա-  
ռաջնորդ Գեր. Մեսրովի արքեպիսկոպո-  
սը, Պլուսայի աշխարհական պատգա-  
մաւոր Պ. Աբգար Յովհաննէսեանը և  
Շուշու աշխարհական պատգամաւոր Պ.  
Ներսէս Աթաբէգեանը :

Բնտրութիւնից յետոյ վանքի սեղա-  
նատան մէջ ընդհանուր հացկերոյթ է  
եղել և բաժակներ են պարզուել Վեհ.  
Սուլթանին և Խուսիոյ Վեհ. Կայսեր  
կենաց : Խօսուած ճառերի մէջ իրաւամբ  
շեշտուում էր այն օրինակելի կարգապա-  
հութիւնն որով անցաւ ընտրութիւնը ։  
Երեկոյետն, մայր տաճարն անթիւ լապ-  
տերներով լուսաւորուած էր :

Ս. Էջմիածնի համագույմար Փողովի  
նախագահող Երեմիա Սրբազանը ուղար-  
կել է Երուսաղէմ, յանուն Խրիմեան

Սրբագանի, մի հեռագիր, որ կը ծանուցանէ ընտրութեան արդիւնքը:

— ՎՀԱ.ԴԻԿՈՒԽԱ.ԶԻԹ. — Այս տարի մեր գլուխուները զգալի մնաս ունեցան նիւթականալէս. վիճակախաղը որ տարեկան 4000 բուբլուց աւելի էր տալիս, արգիլուեցաւ: Նոյնպէս արգիլուեցան թատրոնական ներկայացումները յօգուտ գլուխուներիս: Քաղաքը տուած 600 բուբլի նպաստը մեր ուսումնարաններին նոյնպէս դադարեց:

Այսուն ժողովոյ որոշման համաձայն, կրօն. և Քաղ. ժողովոյ գիւտանքի քննին առին Սանասարեան վարժարանի կանոնագրի խնդիրն և նկատելով որ արդէն նախորդ Վարչութեան կողմանէ այդ կանոնագրով սահմանեալ գործառութեան կարգադրութիւններն, ինչպէս նաև խնամակալութեան մը կազմակերպութիւնն ընդունուած և նոյն իսկ կանոնագրին հաստատուած էր, նկատելով որ այս անգամ կտակակատարին ուղարկած կանոնագրի թէև ինչ ինչ փոփոխութեամբք կը տարրերէր առաջինէն, ստկայն այդ փոփոխութիւնք ընկալեալ կրագադրութեանց ոգւոյն և հիմնական սկզբանց չէին հակառակիր, ընդունելի գտան զոյն և որոշեցին առաջարկել Սանասարեան ժողովոյ որ հաստատէ զայն և Ս. Նախագահին յանձնէ բառայնմ խնամակալութիւնը կոչել ի պաշտօն և կատարել հարկ եղած գործողութիւնները:

Քաղ. ժողովն լսելով Այսուն ժողովոյ դիւանին խորհրդակցութեան այս արդիւնքը, իւր մասին ընդունելի դատեց նոյն առաջարկութիւնն և Ս. Նախագահին յանձնեց որ կրօն. ժողովոյ որոշումն ու հաւանութիւնն ստանալէ յետոյ հաճի ի գործ գնել պարա ու պատշաճը:

— Պօլսոյ Եէնիգիւղի Թաղ. Խորհրդոյ անդամ ընտրուեցան Շէհիրլեան Բիւզանդ, Յակոբեան Ալիքսան և Աշճեան Գէորգ էֆէնտիք:

— Պալատու Արժ. Քարոզչին հըրահանգ պիտի զրկուի Պատրիարքանէն՝ նոր Թաղական Խորհրդոյ ընտրութեան համար:

— Տնտեսական Խորհուրդն որոշեց կրօն. ժողովոյ յայտագրել մայրաքաղաքիս Եկեղեցեաց Դպրաց Դասերու մատակարարութեան մասին իւր ունեցած տեսութիւնն. գոհացուցիչ գտնելով գործադրութեան գնել որոշեց մարդահամարի գործողութեանց մասին Հովուեան Ղազար էֆէնտիի ներկայացուցած հիմնագիծն, և Բերայի Եկեղեցու կարգի յաճախորդները ամենաշափակաւը գնել ու գործուած գնելով:

յանձնեց կեդրոնական համարակալութեան՝ ի քննութիւն և ի տեղեկագրութիւն:

— Յաղաքաբուկան ժողովը՝ Պատրիարքարանի վերաշինութեան խնդրով պիտի զբաղի իւր յառաջիկաց նստին մէջ, ուր ի խորհրդակցութիւն հրաւիրուած է առ այդ կազմեալ յանձնաժողովը: Պատրիարքարանի կիցը գտնուած տան գնման գործողութիւնն աւարտած է արդէն:

— Տարազի մէջ կը կարդամք.

« Դպրոցամիրաց Ընկերութեան ատենապետուհի ամիկին Սրաքսի կիւլ պէնկեանն այժմ մեզ հիւր է Թիֆլիսում: Ազնուաշուք տիկնոջ ամուսինը Սեբաստիայի թեմ: պատգամաւորն էր Ս. Էջմաննում: Տիկինը հմուտ է եւրոպական մի քանի լեզուների: Նա անուանի Դադեան տոհմիցն է: Ազնիւ Տիկինն յատուկ աշխուժով այցելում է Թիֆլիսի գորոցները և նշանաւոր աեղերը. գրում է յիշատակարան, որ վերադարձն է. Պոլիս պիտի լոյս ընծայէ: »

### ԱԶԴ «ԾԱՂԻԿ»

Կը իսդրուի «Ծաղիկ»ի բաժանորդագրութենէ սլարտք ունեցող մեր գաւռացի բաժանորդներէն՝ վճարել ընդփոյթ:

« ԾԱՂԻԿ»ի ներկայ թուոյն մաս մը օրինակաց մէջ 375 երեսը 374 երեսէն առաջ դրուած է սիալմամբ: »

### ԳՐԱՍՈՒՆ

Կազմատուն եւ Թղթավաճառանց  
է Կեսուբէս

ՑԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՊԱՇՊԱԶԻՒՆԻԱՆԵԱՆԻ  
Հաստատեալ 1877

Հայերէն. Թրքերէն և Ֆրանսերէն գրքեր և դասագրքեր. — գլուխական և գրասենեկի պիտոյք. — այլ եւ այլ տեսակ թղթեր, ելն, ելն:

Գրաստունս արդէն բազմաթիւ հեղինակաց և գրավաճառաց հետ զանազան սպայմաններով ուղղակի յարաբերութեան մէջ լինելով պատրաստ է գործ ունենալ ամէն Մեծ. հեղինակաց և գրավաճառաց հետ՝ որք կը գտնուին ի Պոլիս և այլուր. ուստի կը հրաւիրեմք զնոսա և ամէն գրասէրներ գիմել գրաստունս ուր նորանոր միջոցներ ունիմք ի ձեռին՝ գոհացներու մեր ամէն կարգի յաճախորդները ամենաշափակաւը գնելով:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ Երեսինականական ժողովն՝ ըստ Պ. Պալֆասի առաջարկութեան՝ 247ի դէմ 339 քուէով ընդունեց ընտրական դրութեամբ գաւառային ժողովներ կազմելու ծրագիրը: Այդ ժողովներ իրաւունք պիտի ունենան միայն աեղական գործեր կարգադրելու:

— Աւստրալիոյ մէջ ի Մէլպորտ՝ իւր կինն սպաննելով տանը բակին ներքեւ թաղող մարտերիկ Տիմինկ՝ ամսոյս 11 ին կախազան հանուերէ նոյն քաղաքին մէջ:

— Իտալիոյ Ազգային Պանքան իւր զեղչի սակալ 5% ի կազմուց է:

— Պէլլինի Քաղաքապետաց որ միանգամայն անդամ էր Ռայխաթակին և Բըրութեան Տերակոյան, կաթուածահար մեսեր է ամսոյս 15ին:

— Նոր Հանրապետութիւն մը հիմներ են Պոէրները Մոսամէտէսի կողմերը (Հարաւային Ափրիկէ):

— Ճարտինի նոր Երեսինական ժողովը մայիս 11ին իւր նիստերն սկսեր է ամենայն կանոնաւորութեամբ և 150 պաշտօնեայներ աքսորուեր են՝ ընտրութեանց մէջ խարդախութիւնն գործած լինելով:

— Չուրիխի լճին վրայ 11-14 տարեկան 15 պատիկ աղջիկներ որք մօտակայ վարժարանաց գիշերօթիկ աշակերտուհիներ էին, նաւակով պատոյտ մը կատարած ժամանակ, նաւակը շրջելով ամենքն ալ ծովամունքներին, Աղջիկներէն 8ն ազատեցան և 7ը խեղդուեցան:

— Բասրէու՝ կատազի շանց խածուածքին դէմ պատուաստը հնարեկէն յետոյ հիմա ալ լուսնուտութեան (Յարա) դէմ պատուաստ մը գտնել կաշխատի եղեր:

— Անգլիոյ Թագուհին իւր թոռը՝ ծորճ իշխան՝ Կորտութեան բարձրացուց և եղոքի գուքս անուանեց իրը յաջորդիւր իւր գահաժառանգ հօր՝ Կոլիէսի իշխանին: Նոյնպէս Կորտութեան բարձրացուց եգիստոսի անգլիտեան քաղաքական դուռքակաստար Սըր Եվլիս Պէրինկը:

— Պէնինի Անվիրս քաղաքին Բէչէ առեարական մեծ տունը ութ միլիոն պարտքով սնանկացերէ: մեծաքանակ գոյք ունենալով, գոհացուցիչ կարգութեան մը յուսալի է:

— Հոլլանտայի խնամակալ թագուհին և նորատի թագուհին Բոցտամ գացին յայցելութիւն Վիլէլմ կայսեր որ սիրամիր ընդունելութիւն ըրաւ:

— Խրանսայի խնամակալ թագուհին և Սպանիոյ միջեւ կատարեկի առեարական յարաբերութեանց մասին Սպանիոյ առաջարկներն ընդունուեր են Ֆրանսայի կողմէն:

— Միացեալ-նահանգաց Քահսաս նահանգին վիլլինկթըն քաղաքին մէջ փոթորիկ մը ծագելով, մեծ վեստներ պատճառեր է և 500 անձեր ալ մեռեր կամ վիրաւորուեր են:

— Տանիմաբայի թագաւորը իւր ամուսնութեան յիսնամեկին մասնակցող իշխանաց օսկեայ փոքրիկ պատռուանը-շաններ տուաւ՝ Փղի պատռուանշանի կապոյտ ժամանէնին վրայ կախուելու համար:

— Մատակասիար կղզւոյն Հովա կառավարութիւնը քանի մը տարի առաջ ֆրանսայի հետ կնքած 40 միլիոն Փըրանքի փոխառութեան տոկոսը չէ կըրցեր վճարել.

— Հնախաւ Պարսկաստանի և Հնդկաստանի կողմերը տաքերուն հետ համեմատարար կ'աւելնայ:

— Նախիի Համալսարանական ուսանողք իրենց Համալսարանին բացման տարեգարձը տօնելու համար մեծ հանդէներ կը կազմակերպեն: Պ. Բառնօներիայ պիտի գտնուի: գերմանական լուգիրք զայն հակագերման շարժում մը նկատելով մեծ ազմուկ կը հանեն:

— Գերմանիոյ Ֆրէտէրիկ Կոյսրուհին իւր ինքնանկար կենդանագիրը նըռուիրած է ձարոնի Կոյսրուհուոյն:

— Ալիքիոյ մէջ մարախ ծագեր է սարսափելի պայմանաց մէջ:

— Երկմետաղեան Համաժողովին մասնակցիլ խոստացած են նաև գերմանիա և ֆրանսա:

— Անգլիոյ Երեսսիսանական Ժողովը 53ի դէմ 152 ճայնով և Բ. Ընթերցմամբ իրլանտայի մասին ներկայացուած կրթական ծրագիրն ընդուներ է:

— Ի Փրկիպրան (Պոհեմիա) արծաթի հանքի մը մէջ հրդեհ ծագելով, 25 բանտորք մեռեր, 25 մարած հանուեր և 200 ալ անյայա մնացեր են:

— Խռուարիոյ մէջ կառախումը մը միրկի բանուելով չորս չոփեկառք փոսերու մէջ գլորեցան, միւսները փշեցան և 22 ճամբորդ ալ վիրաւորուեցան:

— Խռուիոյ Թուրինո քաղաքին մէջ Արիմու պատերազմի ժամանակ մեռնող իտալացի զօրաց ի պատիւ կանգնուած յիշատակարանի մը բացումը հինգչարթի օրը կատարուեր է:

— Գերմանիոյ Կայսեր դէպի ի հիւսիս ուղեւորութեան թուական որոշուած է յուլիս 24, իսկ վերադարձի համար՝ օգոստոս 4:

— Անգլիոյ Երեսսիսանական ժողովոյ պահպանողական կուսակցութեան Վերաբերութեան միանկերէն փոփ-ծովակալ Ռիշար Շարլ Մայէն յանկարծամահ եղեր է:

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատասխանականութիւնն է: — Իզզէթ Իլասս է Փէնստի Եղեսիոյ գաւառական նախական դատարանին ընդհանուր դատարանի օգնական անուանութեան:

Աստիճանի: — Պրուսայի կուսակալութեան հաջուակալութեան գիւանի գերբառորէն՝ Ահմէտ է Փէնստի Սանկցիէ Միւթէ մայլիզի աստիճան շնորհուեցաւ:

Պատուանեանի: — Մաղնիայի հաշուակալ Ալի Բիզա պէտի և Արքունի նախարանի ճարտարապետներէն Արթին է Փէնստի Դ. կարգի Մէնիստի պատուան առաջանաւ:

Ներդրամի: — Բ. զօրաբանակին հըրամանատարի փոխանորդ Մահմուտ Համսուի փաշայի և քննիչ կայս. թիկնապահ Միրիլիվա Արթի փաշայի կիւթի ոսկի շքադրամ տրուեցաւ:

Դադախիայէն մինչեւ Պաղտատ հարկ եղած տեղերը ճիւղերով կայս. կառավարութեան հաջուայն երկաթու. զի մը շինելու համար ծրագիր մը մատուցուած է Մէրսին — Ատանա երկաթուղոյն արտօնատիրոջ՝ Մէնմէտ Նահիտ պէտի կողմանէ:

Կարմիր ծովէն եկող նաւերը տասնօրեայ քարտնթինայի պիտի ենթարկուին:

Դամասկոսի և շրջակայից մէջ թէնակքի մշակութեան փափաքողք բազմաթիւ են:

Պանտեմայի Սարը գիւղին շրջակայները սպաննուեր է անցեալ ուրբաթօր անթիքածի թագւոր աղա անուն անձ մը: Սպաննողք երեք Զէրքէզներ են: Յիշեալ ոճրագործք ձերբակալուելով բանտարկուած են ի կէօնէն:

Միջերկական նեղուցին առողջապահական վարչութեան վիճակը և Նաորայի մաքրանոցը քննելու համար յանձնաժողով մը պիտի երթայ:

Դատասահի ենթարկուած են Մարաշի ընդհանուր դատախազի օգնական Ալի Հայտար է Փ., նախնական դատարանի անդամ Յակոբեան է Փ., Եւդոկիու Նախակ է օմէլը Լութֆի է Փ. և Տիգրանակերտի վճռագրոց նախորդ գործադիր պաշուոնեայ Արթին է Փ.:

Մարաշի մէջ Գետրոս անուն քահանայի մը Սեղրակ օրդին մէթալիք 40 փարանոցին կեղծերը չինելուն համար ձերբակալուած է և գործիներն ալ գըրաւածուած են:

Եղենադաս տաեանը 15 տարուան շղթայակապ աշխատութեան դատապարտեց ջրհանկիր Տէլի Ահմէտ որ իտալական գեսպանատան պահակ չուգենաւուն նաւազներէն Սունչինին ըսպաննած էր:

Սամարիոյ մէջ 3 գողեր երանիկ անուն կնոջ մը 500 ոսկին գողնալու համար անոր տունը մոտած ժամանակ է եղբակալուեցան:

Համիսիյէ հեծելագնդոց կազմակերպութեան մասին խորհրդակցութիւններ կատարելու համար կայս. թիկնապահ Շաքիր փաշայի նախագահութեամբ նոր յանձնաժողով մը կազմուեցաւ:

Համազգային Անկելանոցը Շիշլի պիտի կառուցուի: քարտէ սները պատրաստուած են: Թրիչոթէի մէջ նոյն Անկելանոցին համար 483 ոսկի հանգանակուեր է:

Օսար հպատակաց գատերն երկու տարբեր տէրութեանց հպատակաց միջեւ տեղի ունենան, օսմանեան դատարանաց մէջ պիտի տեսնուին:

Գորից մտնելով Սարբեար (Վոսրո) ձէ վահիրձեանց բնակարանը, 1000 ոսկւ թանկագին նիւթեր գողցեր են:

Իաքերդ նախնական դատարան ունեցող Գ. կարգի գաւառակի մը պիտի կերածուած և մինչեւ կուսակալութեան կեդրունը՝ Մէրսին — Ատանա երկաթուղոյն արտօնատիրոջ՝ Մէնմէտ է Գիծ մը պիտի շինուի:

Անաօլուի երկաթուղուոյ գծին վրայ տեղ տեղ մթերանոցներ կառուցանելու արտօնութիւնը մերժուած է նոյն երկաթուղուոյ ընկերութեան, վասըն զի այդ իրաւունքը տեղուոյն բնակչաց կը վերաբերի:

Խնայողական սնտուկ մը պիտի հաստատուի ելմոտական նախարարութեան մէջ և իւր գրամագլուխ՝ պաշտօնից ամսականներուն 3% վար պիտի գրուի:

Անգլիոյ մէջ օտար ցորեններու մրցման ցուցահանդէս մը պիտի կազմակերպուի ի մօտոյ: Կայս. կառավարութիւնն ալ մասնակցիլ հրաւիրուած է:

Անգրապի մէջ ապրիլ 27ին երկու ժամ անընդհատ անձրւ տեղալով, մեծաւերումներ գործեր է:

Օտոսուրոյի մէջ մարախ տեղալ սկսելով, ժողովուրդը քանի մը օր խանութները գոցելով, մարախ ժողովել գացեր է:

Փուրեիոյ հանքաց և անտառաց արտագրութեանց նմոյները ի ցոյց պիտի գրուին Զիքակոյի արուեստահանդիսին մէջ:

Զինուորականաց որբերը երբ անկարող լինին ուսում առնելու, կայսերական անձնական զօրաբանական արհեստական գունդին նախնական գումարտակին մէջ պիտի կրթուին, ապա միւս գումարտակաց մէջ փոխադրուելու համար: Ասոնցմէ ընտրեալը կայս. գործադիր յանձնաժողովի յետոյ, եւրոպա ևս պիտի զրկուին կատարելաւ գործադիր պաշտօնեայ Արթին է Փ.:

— Սնանկ հրատարակուած են Պօլիս, Մեծ-Շուկայ, Զինիլի խանը հաստատեալ մանիֆաթուրամի Թովմաս և Վասիլի:

— Պիլէնիլի և Վէզիր խանի միջեւ բանողինութեանց յատուկ կառախումբին անցած պահուն, հնոցպանը՝ Օսման՝ անուշդրութեամբ գլուխը դուրս հաներ և երկաթեայ կամուրջին բաղկալով ջախջախուեր ու ինքն մեռեր է: Նոյն գծին վրայ գտնուող փասուլոյն պահապանն ալ ուղեւորաց կառախմբին ներքեւ մնալով, ոտքերը կորտուեր են:

— Էսկիչիլի Հայ-Հռովմէականաց եկեղեցին ապրիլ 28ին գիշերը գողեր մտնելով 40 սահերգիլ ուկի: 800 դրուշ դրամ, ործաթ խաչ մը և այլ ոսկեայ անօթ մը գողցեր են: Գողերը երկաթուուց գործաւոր երկու Հայեր են որք ձերբակալուելով, գողօններն ալ առնուեր են:

— Սենեկապանաց միջեւ տեղի ունեցած վէճերը կանոնաւոր կերպիւ կարգադրելու համար քաղաքապետութեան կողմէ 4 իսլամ, 4 Հայ և 4 Յոյներէ բաղկացած ժողով մը կազմուեր է:

— Պալարիս Պ. Պաքի սենեկէն 240 ուկի գողցուեր է. թէպէտ յիշեալին սպասաւորներէն իտալացի մ'ու Հայ մը ձերբակալուեր են, այլ կասկածն սենեկապանին վրայ ծանրանալով, սաձերբակալուեր է, իսկ միւսներն արձակուեր են:

— Բէժի գէտեր անցեալ շաբթու ի Կէօզ-Թէրէ անգէն մաքսախոյզի մը փախուցած ծխախոտը գրաւելու համար երեք տեղէ կը վիրաւորեն զնա և իրենք ալ կը ձերբակալուին:

